

Փորձագետ. Ադրբեջանը պատմական ու հանրագիտարանային կեղծիքներ է թույլ տալիս

2010 թվականի դեկտեմբերին ԵՊՀ հայագիտական ինստիտուտը պատրաստվում է հրատարակել զուտ մասնագետների համար, հայագիտական ուղղվածություն ունեցող, գիտական և գիտահանրամատչելի բովանդակության նյութեր տարածող թուրքական կամ ադրբեջանական համացանցային կայքերի տեղեկատու գրքույկ:

Այսօր այս մասին ասուլիսում ասաց ԵՊՀ հայագիտական ինստիտուտի վիրտուալ հայագիտության բաժնի վարիչ, Միեր Հովհաննիսյանը: Նրա հավաստմամբ բոլորովին վերջերս հայաստանյան համացանցային տեղեկատվական քարոզչության մեջ լուրջ բաց կար՝ պատմագիտական կամ հայագիտական նյութերի ուսումնասիրության հարցում: Բանախոսի ներկայացմամբ, այժմ ինչ-որ ճափով աշխատանք այդ ուղղությամբ տարվում է, սակայն ադրբեջանական կայքերը, նույնպես աշխատում են:

,Այս պահի դրությամբ այդ կայքերի թիվը 48 է, որոնց էջերում կարելի է հանդիպել փոքր գիտահանրամատչելի նյութերից մինչև դարաբաղյան, հայագիտական ուղղվածության չակերտավոր ուսումնասիրություններ: Վերջին մի քանի տարիներին այս հարցում դրոշակակիր դարձավ Ադրբեջանը՝ առաջ անցնելով Թուրքիայից,-ասաց Մ. Հովհաննիսյանը: Օրինակ բերելով, բանախոսը նկատեց, որ 27 կայքերում արխիվավորել են հակահայկական 1500 նյութ, 2 տասնյակից ավելի ուսումնասիրություններ, իսկ 1500 նյութերից 150-ը մասնագիտական, ակադեմիական ոճով գրված նյութեր են: Ըստ նրա, Ադրբեջանն այդպիսի կայքերում նաև Հայաստանին երկայացնում է ոչ թե որպես ազատագրական պայքար մղող, այլ՝ որպես ահաբեկիչ:

Ասուլիսին ներկա նույն ինստիտուտի գիտքարտուղար, Ալիկ Ղարիբյանը նկատեց, որ այսօր հայկական մամուլում այնպիսի նյութեր են նաև տեղադրվում, որը ադրբեջանական կայքերը վերցնում և օգտագործում են; ,Սրանք հոգեբանական ծուղակներ են, որոնք մեր հասարակությանը ներշնչում են թույլի, վախի մթնոլորտ: Մենք տեսնում ենք՝ Ադրբեջանը տարբեր միջոցառումներով ցանկանում է ցույց տալ, որ Ղարաբաղը պատմամշակութային ժառանգության տեսանկյունից Ադրբեջանին է, իհարկե, դա փաստերի կեղծմամբ,-ասաց բանախոսը: Նրա հավաստմամբ, պատմական կեղծիքներից բացի հանրագիտարանային կեղծիքներ էլ են կատարվում:

Վերջում Մ. Հովհաննիսյանը նկատեց, որ Ադրբեջանը շատ հեռուն է գնացել. այսպես՝ ստեղծել է հայալեզու կայք ու իր այդ քայլը մեկնաբանել է, թե հայաստանում ռուսերենին ու անգլերենին լավ չեն տիրապետում, դրա համար էլ իրենք հայերենով ցանկանում են Հայաստանի բնակչությանը տեղեկացնել Ադրբեջանում կատարվող բարեփոխումների ու բարեդրացիական դրսևորումների մասին:

Աղբյուր՝ Panorama.am

<http://www.panorama.am/am/society/2010/10/21/eph/>